ԲՅՈՒԼԵՏԵՆ

Փետրվար 2025թ.

Խորհրդի Նիստ

Փետրվարին գումարվել է Պալատի խորհրդի 1 նիստ՝ **11.02.2025թ**.-ին:
11.02.2025թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 6 հարց: Քննարկման ընթացքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի խորհրդի 25.12.24թ N38-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու, Պալատի անդամներ «Մելիքյանս ընդ Քո» ՍՊԸ և «Աուդիտ Արմենիա» ՓԲԸ նկատմամբ ԿՊՄ կիրառելու մասին որոշումները:
Այլ հարցերի ներքո քննարկվել է Պալատի գրասենյակի կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով շինարարական կազմակերպության ընտրության և պայմանագիր կնքելու վերաբերյալ հարցը:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

07.02.2025թ.-ին տեղի է ունեցել «Ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման քայլերի հաջորդականությունը» թեմայով դասընթացը: Այն վարում էր Մարատ Մանուչարյանը:



20.02.2025թ.-ին տեղի է ունեցել «ԱՄՍ 540 – Հաշվապահական հաշվառման գնահատումների, ներառյալ իրական արժեքի հաշվապահական հաշվառման գնահատումների և դրանց հետ կապված բացահայտումների աուդիտ, ԱՄՍ 620 – Աուդիտորի փորձագետի աշխատանքի օգտագործումը» թեմայով դասընթացը: Այն վարում էր Անժելա Գևորգյանը:



18.02.2025թ.-ին տեղի է ունեցել «Աշխատանքային պայմանագրի կնքումը էլեկտրոնային թվային համակարգով, աշխատաժամերի հնարավոր փոփոխությունների ներկայացում և հարց ու պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր Ժորա Սարգսյանը:



ԵԱՏՄ աուդիտորների Խորհրդատվական մարմնի նախագահության նիստ

2025թ. փետրվարի 18-ին տեղի ունեցավ Եվրասիական տնտեսական միության աուդիտորների Խորհրդատվական մարմնի նախագահության նիստը: Նիստին մասնակցում էին ՀԱԵԽ նախագահ, Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը և Պալատի գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը:
Օրակարգային հարցերի շրջանակում ներառված էին ԵԱՏՄ ԱԽՄ ատեստավորման և որակավորման բարձրացման հանձնաժողովի ԵԱՏՄ անդամ երկրների օրենսդրության նույնականացման վերաբերյալ առաջարկների քննարկումը, ԵԱՏՄ ԱԽՄ նախագահի հաստատումը և այլ հարցեր:
Քննարկման արդյունքում օրակարգային հարցերի վերաբերյալ ընդունվեցին համապատասխան որոշումներ:

ՀԱԵԽ նիստ

2025թ. փետրվարի 25-ին տեղի ունեցավ Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի (ՀԱԵԽ) 2025թ. առաջին նիստը:
Նիստը նախագահում էր ՀԱԵԽ նախագահ, Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը:
Նիստի ընթացքում քննարկվեցին ՀԱԵԽ միջազգային համագործակցության, մասնագիտական էթիկայի, կրթության, որակի հսկողության հանձնաժողովների 2024թ. հաշվետվությունները և 2025թ. աշխատանքային ծրագրերը: Հաստատվեց նաև 2025թ. ՀԱԵԽ աշխատանքային ծրագիրը, ինչպես նաև քննարկվեցին ՀՄԴ ցանցային անդամության դիմումի ներկայացման, ՀԱԵԽ պաշտոնական կայքի ստեղծման վերաբերյալ հարցերը: